

1828-1829թթ. ԳԱՂԹԱԾ ՊԱՐՄԿԱՀԱՅԵՐԻ ԹՎԱԶԱՆԱԿԻ
ՀԱՐՅԻ ՇՈՒՐԶ

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմն ավարտվեց ռուսների հաղթանակով: 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի պայմանագրի III հոդվածով «պարսից շահն իր և իր հաջորդների անունից մեկընդմիջտ որպես Ռուսաստանի սեփականություն ճանաչեց Երևանի և Նախիջևանի նախկին խանությունները»¹: Թուրքմենչայի պայմանագրի վերոհիշյալ կետը բախտորոշ դեր խաղաց հայ ժողովրդի կյանքում: Բխելով վերջինիս ցանկություններից ու պահանջներից՝ այն կենսական նշանակություն ունեցավ հայության համար: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ցարական կառավարության կողմից արված հաջորդ տրամաբանական քայլն եղավ նույն պայմանագրի XV հոդվածը, որով պարսկահայատակ քրիստոնյաներին իրավունք տրվեց մեկ տարվա ընթացքում, իրենց ընտանիքներով ու շարժական գույքով, անարգել գաղթել ռուսական տիրապետության սահմանները²: Բնակչության զանգվածային այս տեղաշարժը, հիմնովին փոխելով Ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերը, մեծապես նպաստեց վերջինիս տարածքի վրա հայահավաքման գործին: Միևնույն ժամանակ կազմակերպման ու իրականացման փուլերում թույլ տրված որոշ թերությունների պատճառով այն անսպառ վեճերի ու տարաձայնությունների պատճառ դարձավ ինչպես անցյալի, այնպես էլ ժամանակակից հայ և ռուս պատմաբանների միջև: Հատկապես լուրջ տարաձայնություններ ծագեցին գաղթականների թվի շուրջ:

Պատմագիտական գրականության մեջ և այլ աղբյուրներում պարսկահայ գաղթականների թվի տարբերությունը տատանվում է 7-11 հազար ընտանիքի միջև:

Ս. Գլինկան³, Վ. Պոտտոնը,⁴ Ստ. Պալասանյանը⁵ և «Հայ ժողովրդի պատմության քննությանը վերաբերող վավերագրերի ժողովածուի»⁶ հեղինակները հիշատակում են, որ «ավելի քան 8000 ընտանիք, որը կազմում է, ենթադրելով 5 հոգի յուրաքանչյուր ընտանիքում, մինչև 40000 մարդ... Լազարյան Ղազար գնդապետի հորդորմամբ թողին իրենց տունուտեղը և անցան Ռուսաց նոր տիրած Նախիջևանի և Երևանի գավառները»: Լեոն Պարսկաստանից գաղթած հայերի թիվը համարում է արդեն 45-50000 մարդ⁷: Պարսկահայ գաղթականներին 8249 ընտանիք՝ 45000 մարդ են հաշվում Ե. Գեղամյանը⁸ և Ալ. Երիցյանը⁹ (մեկ այլ տեղ Ալ. Երիցյանը գաղթած պարսկահայերի թիվը հասցնում է 50-60000¹⁰): Պարսկահայ գաղթականների թիվը խիստ ուռճացված է Երևանի հասարակության ներկայացուցիչների՝ 1828թ. հուլիսին Էջմիածնի հոգևոր կառավարությանն ուղղած նամակում՝ 20000 ընտանիք կամ 100000 մարդ¹¹: Վերջապես խնդրո առարկայի վերաբերյալ արդեն բացահայտ սխալվում է Շչերբատովը, հավատացնելով, թե «Պարսկաստանից հայերի գաղթի հարցում Պասկևիչի հոգածու-

¹ *Договоры России с Востоком, политические и торговые, составил и издал Т. Юзефович, СПб., 1869, стр. 215.*

² *Նույն տեղում, էջ 221-222:*

³ *С. Г л и н к а, Описание переселения армян аддербиджанских в пределах России, М., 1831, стр. 131.*

⁴ *В. П о т т о, Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, ч. 4, СПб., 1887, стр. 732.*

⁵ *Ստ. Պ ա լ ա ս ա ն յ ա ն, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 494:*

⁶ *Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, ч. 1, М., 1833, стр. 54-55.*

⁷ *Լ ե ո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Բ, Եր., Պետական համալսարանի տպակետիս, 1927, էջ 116:*

⁸ *Ե. Գ ե դ ա մ յ ա ն, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, Բաքու, 1915, էջ 139:*

⁹ *Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայր XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 333:*

¹⁰ *Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 307:*

¹¹ *Լ ե ո, Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի 1877-1912, Թիֆլիս, 1914, էջ 104:*

թյունն այնքան գործնական էր և եռանդուն, որ Թուրքմենչայի պայմանագրից հետո 80000 ընտանիքներ գաղթեցին Ատրպատականից Անդրկովկաս»:¹² Նման կարծիքը ընդհանրապես հեռու է իրականությունից և կարող է ունենալ միայն երկու բացատրություն. կա՛մ Շչերբատովը միտումնավոր է մեծացրել գաղթականների քանակը՝ այս հարցում ևս Ի. Պասկևիչին մեծարելու համար, կա՛մ էլ գործ ունենք տպագրական սխալի, կամ վրիպակի հետ:

Հատկանշական է այն, որ խնդրո առարկայի վերաբերյալ տարբեր, հաճախ իրարամերձ ու կասկածելի տեղեկություններ են հաղորդում հենց իրենք՝ գաղթի կազմակերպիչները և իրականացնողները: Օրինակ, համաձայն գաղթի հանձնաժողովի նախագահ գնդապետ Ե. Լազարյանի՝ գլխավոր հրամանատարին ներկայացրած զեկուցագրի՝ 1828 թ. հունիսի 14-ի դրությամբ Ատրպատականից Արևելյան Հայաստան էր գաղթել 6126 ընտանիք¹³: Նույն հունիս ամսվա ընթացքում Պասկևիչին ներկայացրած իր հաջորդ զեկուցագրում Լազարյանը նշում էր, թե ռուսական տիրույթներում հաստատված գաղթականների թիվն արդեն հասել է 6798 ընտանիքի, իսկ հաջորդ ամսվա սկզբին պարսկահայերի գաղթի մասին ներկայացրած իր ընդհանուր հաշվետվության մեջ ուղղակի գրում է. «... ավելի քան 8249 հայկական ընտանիք իմ կողմից գաղթեցվել է Հայկական մարզ»¹⁴: Իրարամերձ են նաև Ն. Աշտարակեցու հաղորդած տվյալները: Այսպես, եթե մինչև գաղթի սկսվելը Ն. Աշտարակեցին ստուգապես համոզված էր դեպի Երևանի և Նախիջևանի պրովինցիաներ գաղթելու ցանկություն հայտնած մոտ 5000 հայկական և 10000 ասորի նեստորական ընտանիքների քանակի հարցում, ապա գաղթի ավարտից հետո խոսում է միայն 8000 ընտանիք նորեկների մասին:¹⁵ Մինչդեռ նրա կողմից Ատրպատական ուղարկված Ստեփան եպիսկոպոսի և Նիկողայոս վարդապետի տվյալներով՝ գաղթականների թիվը 10000 ընտանիք էր¹⁶: Գաղթած պարսկահայերի թվի մասին այլ կարծիք էր հայտնում նաև Ատրպատականի թեմի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսը, որը գրում էր, թե ութ ամիսների ընթացքում «ի քաղաքաց և ի գաւառացն Գարիժու, Մարաղայու, Խոյայ, Սալմաստու, Ուրմիայ, Մեօքմենաւայու, Չալտրանայ, Աւաճուղայ և յայլոց նահանգաց, յորս գտանիւր յազգէն մերմէ Հայոց, ի գումար արկանելով մետասան հազար (տասնմեկ հազար -Ա.Հ.)տունս հանաք և չուեցուցաք զնոսին յայսկոյս Երասխ գետոյ»¹⁷: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մեկ այլ փաստաթղթի համաձայն՝ Ատրպատականից Արևելյան Հայաստան գաղթել էր 8510 ընտանիք¹⁸: Եվ վերջապես պարսկահայ գաղթականների քանակի մասին գոյություն ունի մեկ այլ թվային տվյալ ևս (6946 ընտանիք կամ 35560 մարդ),¹⁹ որն ի հայտ է եկել 1829-1832 թթ. կամերալ ցուցակագրման ժամանակ, և որի մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև: Առայժմ միայն նշենք, պարսկահայ գաղթականների քանակի մասին վերոբերյալ բոլոր թվային տվյալներն էլ թերի են ու կարիք ունեն վերանայման: Պարսկահայերի գաղթի վերաբերյալ արխիվային նյութերի, ինչպես նաև պատմական զրականության մեջ հայտնված տեսակետների մանրագնին քննությունը մեզ թույլ է տալիս ասել, որ գաղթած ընտանիքների թիվը ավելին է, քան ներկայացված է Ե. Լազարյանի զեկուցագրում և ընդունված հայ, ինչպես նաև ռուս պատմագրության կողմից: Մեր տեսակետը հիմնավորելու համար նշենք մի քանի

¹² Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность. По неизданным источникам составил Генерального Штаба Ген.-лейт. Щербатов, т. 3, СПб, 1891, стр. 91.

¹³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 332, ցուցակ 1, գործ 815:

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 151, ցուցակ 1, գործ 25, էջ 4; С. Глинка, Описание переселения..., приложение IV, стр. 114, 131.

¹⁵ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 578:

¹⁶ Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 167ա, վավ. 19:

¹⁷ Մ. Խ ա չ ա տ ը յ ա ն., Պարսկահայերի ներգաղթի կազմակերպումն ըստ ժամանակի փաստաթղթերի, «Լրագրեր հասարակական գիտությունների», N 10, Եր., 1978, էջ 108:

¹⁸ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 59, վավ. 546:

¹⁹ И. Ш о п е н, Исторический Памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, стр. 540; Ա. Երիզյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 337:

փաստեր, միևնույն ժամանակ հիշեցնելով, որ ստորև բերված բոլոր դեպքերում գաղթածները դուրս են մնացել պաշտոնական հաղորդումներից և ցուցակներից:

1. Համաձայն Թուրքմենչայի պայմանագրի XV հոդվածի՝ գաղթող հայ ընտանիքներն իրենց անշարժ ու շարժական գույքը պայմանագրով նշված ժամկետում վաճառելու համար իրավունք ունեին տեղում թողնելու հավատարմատարների՝ իրենց ընտանիքի անդամներից մեկին կամ մի քանիսին: Արխիվային փաստաթղթերը վկայում են, որ սրանց մեծ մասը հետագայում գաղթել են Արևելյան Հայաստան՝ միանալու իրենց հարազատներին, ընդ որում, գերազանցապես Թուրքմենչայի պայմանագրով սահմանված միանյա ժամկետը լրանալուց հետո²⁰:

2. Լազարյանի հաշվետվության մեջ արտացոլված են եղել միայն այն ընտանիքները, որոնք գաղթելով գյուղերով կամ խմբերով ստացել են պետական նպաստ ու հաստատվել գաղթականական կոմիտեի կողմից իրենց հատկացված վայրերում (Ընդգծումը մերն է-Ա. Հ.): Իրենց նախաձեռնությամբ և սեփական միջոցներով գաղթած, ինչպես նաև պետական նպաստ չստացած ընտանիքներն այս հաշվետվության մեջ չեն հիշատակվել: Օրինակ՝ Մակուի նահանգից մելիք-Յաղուբը ռուսական իշխանություններից գաղթելու թույլտվություն է խնդրել նպաստ չպահանջող 30 ընտանիքների համար²¹: Մեր տվյալներով՝ ռուս-պարսկական սահմանն առանց պետական օգնության և փաստաթղթեր ստանալու անցածների թիվը հասնում է մինչև 660 ընտանիքի, և որ ամենակարևորն է՝ սրանք տեղավորվել են ոչ թե նախապես որոշված բնակավայրերում, այլ հասել են մինչև Վրաստան²²: Հայտնի են նաև դեպքեր, երբ ինչ-ինչ պատճառներով տարբեր ժամանակներում Պարսկաստան քշված առանձին մարդիկ կամ ընտանիքներ Պարսկաստանում ռուսական գլխավոր հյուպատոս Ամբուրգերի կամ պարսկական տարբեր քաղաքներում գտնվող ռուսական զորաջոկատների հրամանատարների միջոցով կարողացել են վերադառնալ իրենց բնակության հին վայրերը: Այսպես, Ամբուրգերի վկայությամբ 40 հայ ընտանիքներ (172 մարդ) իր կողմից դուրս էին բերվել պարսից սահմաններից և ուղարկվել Նախիջևան:²³ Սրանցից 14 ընտանիք, հասնելով Հայկական մարզ, մնացել էր բնակվելու Մարդարաբադի մահալում, իսկ մյուսները դարձել էին իրենց բնակության նախկին վայրերը:²⁴ Խոյում կանգնած ռուսական զորաջոկատի հրամանատար, զեներալ-մայոր Պանկրատևը հիշատակում է ևս 20 մարդու (հայ) մասին, որոնց նա հետ էր պահանջել պարսիկներից և ուղարկել Հայկական մարզ:²⁵ Մեր կարծիքով, այս երևույթը կրել է զանգվածային բնույթ, այն աստիճան, որ նույնիսկ լրացուցիչ գաղթ կազմակերպելու համար Աբաս-Միրզայի թույլտվությամբ բանակցություններ են սկսվել Կայմակամ և Պարսկաստանում ռուսական դեսպան իշխան Գուգորուկովի միջև: Այս նոր բանակցությունների արդյունքում որոշվել է յուրաքանչյուր կողմից մեկական աստիճանավոր ուղարկել Խոյ և Մալմաստ, որոնք տեղում «կսկսեն խնդրագրեր հավաքել գաղթել ցանկացող հայերից: Այդ աստիճանավորների գալստյան օրից հաշված, կնշանակվի 40-օրյա ժամկետ, որի ընթացքում ոչ ոքի չի արգելվի Ատրպատականից Արաքսն այն կողմ գաղթելը: 40-օրյա ժամկետն անցնելուց հետո պարսից կառավարությունն այլևս ոչ մի խնդրագիր գաղթելու վերաբերյալ չի ընդունի»²⁶:

3. Պատմագրության մեջ լռությամբ են անցել այն փաստերի կողքով, որ պարսկահայ գաղթականների մի մասը, չկարողանալով տանել վերաբնակեցման առաջին տարիների դժվարությունները, վերադարձավ Պարսկաստան: Մինչդեռ ըստ Մ. Գարբինյանի՝ սրանք մոտ 300 ընտանիք էին²⁷:

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 43, էջ 1033-1035, գործ 46, էջ 125-128:

²¹ Նույն տեղում, գործ 28, էջ 379:

²² Сборник газеты Кавказ, изд. О. Константиновым, первое полугодие, Тифлис, 1847, стр. 62.

²³ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 437:

²⁴ Նույն տեղում, գործ 31, էջ 573:

²⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 492:

²⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 36, էջ 50:

²⁷ Մ. Գ ա ր ք ի ն յ ա ն, Պարսկահայերի գաղթը և նրանց բնակեցումը (1828-1829 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1973, N 8, էջ 17:

4. Տակավին լուրջ ուշադրության չի արժանացել նաև Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների թվի վերջնական ճշգրտման հարցը: Արխիվային վավերագրերի վկայությամբ, Պասկևիչը դեռևս 1828 թ. մարտին հրահանգել էր Երևանի մարզային վարչությանը՝ թույլատրել գաղթականներին ըստ ցանկության բնակություն հաստատելու նաև Ղարաբաղում²⁸: Համաձայն Ե. Լազարյանի՝ գլխավոր հրամանատարին ներկայացրած զեկուցագրի՝ 1828 թ. հունիսի դրությամբ վերջիններիս թիվը կազմում էր 535-ընտանիք²⁹: Ալ. Երիցյանը³⁰ և Մ. Բարխուդարյանը³¹ հաշվում են այսպիսի «մի քանի հարյուր ընտանիք»: Առանց օգտագործած աղբյուրները նշելու, Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների մոտ 700 ընտանիք է հաշվում Մ. Գարբինյանը³² (Մեկ այլ տեղ մույն խնդրին անդրադառնալով՝ Մ. Գարբինյանը նշում է. «չինովիկների անհոգության ու տեղի մահմեդականների թշնամական վերաբերմունքի պատճառով ընդամենը երեք ամսում 1012 մարդ մահացավ»³³): Մեր կարծիքով, Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների թիվն իրականում ավելի քիչ է եղել, քանի որ Հայկական մարզային վարչության 1828-1831 թվականների նիստերի արձանագրություններում խոսքը գնում է միայն 200-300 ընտանիքների կողմից մի քանի գյուղերի վերակենդանացման մասին³⁴: Շեղվելով թեմայից՝ նշենք նաև, որ խնդրո առարկայի վերաբերյալ հայ պատմագրության ժամանակին թույլ տված անհոգ վերաբերմունքը առիթ է տվել ժամանակակից աղբյուրների մի քանի վայ-պատմաբանների (Բ. Ալիև և ուրիշներ) պնդելու, թե իբր Ղարաբաղում մինչև XIX դարը «չի եղել որևէ զգալի հայ էթնիկական զանգված», և որ հայերի զանգվածային գաղթ Ղարաբաղ կատարվել է միայն Թուրքմենչայի պայմանագրից հետո, «ի հաշիվ տեղի բնիկ մահմեդականների իրավունքների ոտնահարման, երբ ամենահամեստ հաշվարկներով գաղթել են ավելի քան 130000 հայեր (մի ուրիշ հեղինակի տվյալներով՝ մինչև 200000 Ա. Հ.)»³⁵: Ղարաբաղում հաստատված պարսկահայ գաղթականների թվի վերջնական ճշգրտման հարցը առանձին ուսումնասիրության նյութ է, որին սույն հոդվածի շրջանակներում չենք կարող ամենայն մանրամասնությամբ անդրադառնալ, սակայն, նկատի առնելով, որ Աղբյուրներում այս հարցի վերաբերյալ կատարվում է իսկական «պատմաշինարարություն», կուզենայինք միայն մեկ հարց տալ աղբյուրներից մեր «գործընկերներին»: Որքա՞ն կկազմեր նրանց «համեստ հաշվարկներով» Լեռնային Ղարաբաղ գաղթած 130000 հայերի բնական աճը 1828-1989 թվականներն ընկած ժամանակահատվածում, եթե 1979 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում բնակվում էր ընդամենը 123000 հայ³⁶:

5. Եվ վերջապես տարակարծության տեղիք է տալիս նաև պարսկահայ գաղթականների ընդհանուր թիվը: Թե՛ արխիվային շատ վավերագրեր և թե՛ հետազայի շատ ուսումնասիրողներ պարսկահայ ընտանիքը համարել են միջինը 5 անձից բաղկացած: Մակայն, մի շարք հանգամանքներ հնարավորություն են ընձեռում մեզ վիճարկելու գոյություն ունեցող այս թեզը: Այսպես, հայ մեծամուն վիպասան Բաֆֆին, լինելով պարսկահայերի դրության լավագույն գիտակ, Պարսկաստանի զանազան վայրերում բնակվող հայ ընտանիքների թվակազմի վերաբերյալ հիշատակում է տվյալներ, որոնց վերլուծությամբ միջին ընտանիքը պիտի կազմեր մոտ 6.5 մարդ: Դիշտ է, Բաֆֆու բերած տվյալները վերաբերում են XIX դարի 50-ական թվականներին Կենտրոնական Պարսկաստանում (Արաղեստան) ապրող հայ ընտանիքներին (Ատրպատականի հայ բնակ-

²⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 642:

²⁹ Сборник газеты Кавказ, նշվ. աշխ., էջ 62:

³⁰ Ալ. Երիցյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 337:

³¹ Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 34, 53, 155, 164:

³² Մ. Գարբինյան, նշվ. աշխ., էջ 17:

³³ Նույն տեղում, էջ 18:

³⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 16, էջ 39-40, 472, գործ 28, էջ 446, գործ 36, էջ 62-63, 973-976, գործ 43, էջ 658-659, գործ 44, էջ 300:

³⁵ И. А л и е в, Нагорный Карабах; история, факты, события, Баку, 1989, стр. 76.

³⁶ Ե. Մանուկյան, Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991, էջ 91:

չության մասին այստեղ տվյալներ չկան),³⁷ սակայն, Պարսկաստանից հայերի զանգվածային արտագաղթի շրջանում (1828թ.) տակավին նահապետական կենցաղով ապրող հայ ընտանիքները պետք է որ նշվածից ավելի քիչ անդամներից բաղկացած չլինեին: Առավել ևս, որ Առքայատականում հայերն ավելի խիտ են ապրել, քան մնացած ողջ Պարսկաստանում: Մի հանգամանք ևս գալիս է հաստատելու մեր այս ենթադրությունը: 1828թ. հուլիսի 2-ին Հայկական մարզային վարչությունը որոշում է միայն սնվելու համար խիստ կարիքավոր պետական զանձարանից, յուրաքանչյուր գաղթական անձին տալ 1-ական արծաթ ռուբլի օգնություն, ընդ որում, «ընտանիքն հաշվելով 5 հոգի, որոնք 4 տարեկանից բարձր են»³⁸: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ընտանիքի մինչև 4 տարեկան անդամները այդ նպատակի համար չեն հաշվառվել, հետևաբար ընտանիքը պետք է բաղկացած լիներ ամենաքիչը 5-7 հոգուց: Մի ուրիշ տեղեկագրում հիշատակվում է Պարսկաստանից 1828թ. մարտ-ապրիլ ամիսներին Նախիջևանի պրովինցիայում հանգրվանած 2551 ընտանիքի թվաքանակը՝ 13160 մարդ,³⁹ այսինքն՝ միջին ընտանիքը կազմել է 5.2 մարդուց մի փոքր ավելի: Այս փաստը վերաբերում է ռուս-պարսկական սահմանն անցած ընտանիքներին, որոնք, աղբյուրների հիշատակմամբ, գաղթի հանրահայտ ծանր պայմաններում պիտի որ շոշափելի կորուստներ ունեցած լինեին: Ահա այս ամենը ավելի են ամրապնդում մեր այն ենթադրությունը, որ պարսկահայ ընտանիքի միջին կազմը եղել է 5-7 մարդ:

Ահա այս փաստերը նկատի առնելով էլ մենք պնդում ենք, որ ռուս-պարսկական սահմանն անցած պարսկահայ գաղթականների թիվը եղել է ոչ թե 8249 ընտանիք, ինչպես նշում է Ե. Լազարյանը Պասկևիչին ներկայացրած իր հաշվետվության մեջ, այլ ավելի քան 9509 ընտանիք կամ մոտ 57000 մարդ (ենթադրելով 6 հոգի յուրաքանչյուր ընտանիքում): Արաքսն անցնելուց հետո, ռուսական տիրույթներում սրանք տեղաբաշխվեցին հետևյալ կերպ. շուրջ 660 ընտանիք, որ գաղթել էր առանց պետական օգնություն ու փաստաթղթեր ստանալու, հաստատվեց ոչ թե գաղթականական կոմիտեի կողմից նախօրոք ընտրված վայրերում՝ Երևանի ու Նախիջևանի նախկին խանություններում, այլ, ավելի հեռանալով՝ հասավ մինչև Վրաստան (սրանցից մոտ 40-50 ընտանիք, հաստատվեց Արևելյան Օիրակի Փոքր Ղարաքիլիսա, Մեջիտլի և Աղքիլիսա գյուղերում)⁴⁰: Մոտ 300 ընտանիք, համաձայն Հայկական մարզային վարչության 1828-1831 թթ. նիստերի արձանագրությունների, հաստատվեց Ղարաբաղում, իսկ 300 ընտանիք էլ հաջորդ 1829-1830 թթ. ընթացքում, չդիմանալով վերաբնակեցման առաջին տարիների դժվարություններին, կլիմայական նոր պայմաններին ու տեղական իշխանությունների անհոգի վերաբերմունքին, վերադարձավ Պարսկաստան:

Մնացած 8249 պարսկահայ ընտանիքները հաստատվեցին Հայկական մարզում, Երևան, Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում: 1829-32 թթ. Հայկական մարզում անցկացվեց կամերալ ցուցակագրում, համաձայն որի՝ 1831 թ. դրությամբ մարզում պարսկահայ գաղթական ընտանիքների թիվը, 1303-ով նվազելով, հասել էր 6946-ի կամ 35560 մարդու (տե՛ս աղ. 1):

Աղույակ 1

Հաստատված վայրերը	ընտանիքների թիվը	բնակիչների թիվը
Երևան քաղաք	366	1715
Նախկին Երևանի խանության 10 մահալներ	4193	21853
Նախիջևան քաղաքում	265	1110
Նախկին Նախիջևանի խանության 4 մահալներ	1872	9542
Օրդուբադ քաղաք	36	182
Օրդուբադի շրջան	214	1158
ԸՆԴԱՄԵՆԸ	6946	35560

³⁷ Բ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1958, էջ 127-128:

³⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 10, էջ 137-138:

³⁹ Собрание актов..., ч. 2, М., 1833, стр. 387.

⁴⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 47, ցուցակ 3, գործ 920.; ցուցակ 2, գործ 128, 18: Ս. Էփրիկյան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 5, 479:

Շուպենի վկայությամբ, գաղթականների թվի նվազման հիմնական պատճառը եղել են այդ ժամանակ Հայկական մարզում տարածված համաճարակային հիվանդությունները⁴¹: Աղբյուրները վկայում են, որ գաղթականներն անսովոր էին Արարատյան դաշտի կլիմային, և շատերը զոհ գնացին դրան: Հայկական մարզում աշխատած ցարական աստիճանավոր Ջուրարյովը համաճարակային հիվանդություններին ու անբարենպաստ կլիմային ավելացնում է նաև տեղական իշխանությունների անհոգի վերաբերմունքը և շրջակա քոչվոր թուրքերի ավազակային հարձակումները⁴² (Միայն Երևանի պրովինցիայում ժանտախտով վարակվեց ու մահացավ մոտ 800 գաղթական ընտանիք: 1012 մարդ, երեք ամիս բաց երկնքի տակ, առանց սննդի մնալով, մահացավ Ղարաբաղում),⁴³ իսկ ըստ Լեոյի, գաղթականների նվազման պատճառը նաև «անկազմակերպ տեղափոխության սարսափներն են, երբ բազմությունը մինչև իր վերջնական տեղավորումը կորցրեց մոտ 10000 հոգի»:⁴⁴

К ВОПРОСУ О ЧИСЛЕ АРМЯН, ПЕРЕСЕЛИВШИХСЯ ИЗ ПЕРСИИ В 1828-1829 гг.

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

Переселение армян, проживавших в Иране в начале XIX в., узаконенное Туркменчайским мирным договором, в корне изменило демографическую картину Восточной Армении, вошедшей в состав России. В то же время в результате некоторых недостатков, допущенных в фазах организации и осуществления, переселение стало темой нескончаемых полемика для историков прошлого и настоящего.

Особенно серьезны разногласия, касающиеся числа переселенцев.

Согласно отчету Е. Лазаряна Паскевичу, русско-персидскую границу пересекли около 8249 семей; по нашему мнению, число переселенцев было выше перечисленного. В отчете Лазаряна не упоминались ни те семьи, которые переселились по собственной инициативе и на собственные средства, ни те, которые поселились в Карабахе, ни те, которые пересекли русско-персидскую границу после истечения срока, указанного в договоре.

Не упоминается о тех, кто не выдержал трудностей первых годов переселения и вернулся в Иран. Принимая во внимание эти факты, мы считаем, что число переселенцев, перешедших через Аракс, на самом деле было более 9509 семей или около 57000 человек.

⁴¹ И. Шопен, *Աշխ.*, էջ 132:

⁴² Ալ. Երիցյան, *Աշխ.*, հ. Ա, էջ 334-335:

⁴³ ՀՀ ԱԱ, Ֆոնդ 90, ցուցակ 1, գործ 31, էջ 441-442, 497-498:

⁴⁴ Լեոն, *Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս Բ*, էջ 115: